

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ . թէ որ ժամացուցիդ մետաղեայ առւ փին վրայ թաշկինակ կամ՝ բարակ կտաւի կը տոր մը տարածես ու ձիգ բռնած բոցի ցուցընեամ՝ կամ վրան վառած ածուխ մը գնես, երկու վայր կեանի չափ կրնաս կենալ առանց կտաւը այրելու : Նմանապէս եթէ բանալի մը վրայ թել մը գերձան կամ՝ մոզ ամուր մը պլիք ու բոցին բռնեն՝ գերձանը չայրիր ու չբրդիր . բայց եթէ բանալն սասափի տաքնալէն ետեւ : Ի՞նչպէս կրնայ ըլլալ ասիկայ :

ԼՈՒԾՈՒՄՆ . Պատճառը աս է՝ որ աս փորձիս մէջ կտաւն ու գերձանը ջերմութեան հաղորդիչ կ'ըլլան . այնպէս որ ջերմութիւնը ասոնց մէջէն թափանցելով՝ անմիջապէս մետաղին վրայ կը տարածի . իսկ թէ որ կտաւը կամ գերձանը ձիգ պրկած ըլլայ՝ ջերմութիւնը փոխանակ մետաղին անցնելու՝ անոնց վրայ կը հաւաքուի ու զանոնք կայրէ : — Նոյն կանոնով է որ բնալուծական գործարաններու մէջ կապարէ խալիիներ կը գործածեն, որոնց մէջ քանի որ հեղուկ նիւթ մը կայ՝ անօթները սասափի կրակներու ալ առանց հալելու կը գիմանան . որովհետեւ ջերմութիւնը անոնցմէ կը թափանցէ ու հեղուկին վրայ հաւաքուելով՝ զանիկայ կը չոգիացընէ . բայց թէ որ խալիին տակը գիրս մը նստի նոյն ետ . զը մէկէն կը հալի . որովհետեւ որ նոյն գիրսը ջերմութեան թափանցելուն արդելք կ'ըլլայ, որով և մետաղին վրայ կը հաւաքուի ու կը հալցընէ զանիկայ :

ԲԱՆԱՌՈՒԾԱԿԱՆ . Ծածկադրական թանգները որով գրած բանդ անյայտ ըլլալով՝ ուզած ժամանակի միայն կրնաս կարդալ, շատ անդամ դժուարադիւտ բաղադրութիւններ են . բայց հոս քանի մը գիրդին կերպերը գնենք :

Կիտրոնային թթու կամ լիմոնի ջուր, որ տաք ցընելէդ ետեւ կըլլայ մթնագոյն .

Ծծմբային թթու տկար կամ ջրախառն, մութ կարմիր .

Քացինային թթու կամ ձերմակ քացախ, տղոյն կարմիր .

Սոխի հոյզը կամ ջուրը, աւագոյն .

Կեռասի հոյզը, կանաչազդոյն .

Ասոնցմով գրածդ կարդալու համար՝ քիչ մը տոքցընելու է . կիտրոնային թթուով գրածն ամէնէն քիչ ջերմութիւն կ'ուզէ : Անյայտ գրուածքին գունաւորելուն պատճառը՝ կ'երևայ թէ թթուին թղթին վրայ ունեցած բնալուծական ազդեցութենէն է :

ԹՌՈՒՏԲՐԱՆԱԿԱՆ . Մարդուն մէկը տասուիրեք աղքատներու կը հանդիպի, բայց վրան տասուերկու գահեկան միայն ունի . աղքատներուն մէջնալ մէկը կայ՝ որ ողջ առողջ ըլլալուն կրնար աշխատիլ ու իր հացը ճարել . ուստի միաբը կը գնէ որ անոր միայն չայր բայց ի՞նչպէս ընէ որ դիպուածով անոր չհասած մեպուի :

ԼՈՒԾՈՒՄՆ . Աղքատներուն թուովը տասուիրեք հատ խափի թուովմ կամ՝ նարախ քար առ՝ ու կըոր շարէ . ու որուն որ չես ուզեր առաջ անոր քովնէն սկսէ ու իններորդին գահեկան մը տուր, ու նոյն կարգով համրելով ու իններորդներուն տալով կը տեսնես որ տասուիրեքերորդ աղքատին բանին բան չմնար : Կամ թէ որուն որ չես ուզեր տալ անոր քովի ըորրորդէն սկսէ համրել, ու իններորդներուն մէյմէկ գահեկան տալով զերէնք կարգէն գուրս հանէ՝ ու մնացածները միայն կը լոր կըոր համրէ : — Իսկ թէ որ աղքատները տասուերկու հոգի ըլլան, և ունեցած գահեկաններդ տասուումէկ, ան առեն զով որ գուրս ձրգել կուզես՝ անոր նախընթացէն սկսէ համրել ու տալ, ու տուածդդ կարգէն գուրս հանէ :

Ընկերութեան մը մէջ տարիքի ու հասակի վրայ խօսուելով . մէկը ուրիշի մը հարցուց թէ քանի տարուան ես . անիկայ ալ պատասխան տոււաւ . Մէնք իրեք եղբարք ենք Յովհաննէս, Մկրտչէ, ու ես Յարութիւն . Յովհաննէսը ինծմէ երկու տարի մեծ է, Մկրտչից ութը աարի պղտիկ . իրենիս մէկէն ունինք յիսուն տարի . հաշիւը քակէ թէ ես ու եղբարքս քանի տարուան կրնանք ըլլալ :

ԼՈՒԾՈՒՄՆ . Առ նախ է 50ին որ կ'ընէ 16 տարի և 8 ամիս . աս 16 տարի և 8 ամսուն վրայ աւելցուր 2 տարի, որով կ'ըլլայ 18 տարի 8 ամիս, որ է Յարութիւնին տարիքը : Ասոր տարիքէն 8 տարի պակսեցուր, որով կ'ըլլայ Մկրտչին տարիքը 10 տարի 8 ամիս : Հիմա Մկրտչին ու Յարութիւնին տարիքներուն գումարը 50էն հանէ, կը մնայ 20 տարի 8 ամիս որ է Յովհաննէսին տարիքը . ինչպէս որ ասոնց գումարէն ալ յայտնի է . այսինքն Յովհաննէսին տարիքը 20 տարի 8 ամիս Յարութիւնին տարիքը 18 . 8 . Մկրտչին տարիքը . 10 . 8 .

Գումարը 50 ,00